

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱ-
ՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի,
Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,
Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ /գրավոր ընթացակարգի շրջանակներում/
Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի
Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ
Ս. Պապյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
/2005թ. փոփոխություններով/ 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին
մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի
դեկտեմբերի 12-ին ստորագրված Փարիզյան համաձայնագրում ամրագրված
պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը
համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան 28.11.2016թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Փարիզյան համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի դեկտեմբերի 12-ին: Համաձայնագիրը կնքվել է կայուն զարգացման եւ աղքատության վերացմանը միտված ջանքերի համատեքստում կլիմայի փոփոխության սպառնալիքին գլոբալ արձագանքն ամրապնդելու նպատակով: Համաձայնագիրն ուղղված է 1992 թվականի մայիսի 9-ին Նյու Յորքում ընդունված՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) նպատակների իրականացմանը:

Հայաստանի Հանրապետության կողմից Համաձայնագիրն ստորագրվել է 2016 թվականի սեպտեմբերի 20-ին Նյու Յորքում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի կողմից:

2. Համաձայնագիրը՝ խթանելով Կոնվենցիայի դրույթների իրականացումը՝ նպատակ ունի ամրապնդելու գլոբալ արձագանքը կլիմայի փոփոխության սպառնալիքին, ներառյալ գլոբալ միջին ջերմաստիճանի բարձրացումը պահելով նախաարդյունաբերական մակարդակները գերազանցող 2°C-ից բավականին ցածր եւ ջանքեր գործադրելով՝ սահմանափակելու համար ջերմաստիճանի բարձրացումը նախաարդյունաբերական մակարդակից 1.5°C-ով՝ գիտակցելով, որ դա զգալիորեն կկրճատի կլիմայի փոփոխության ռիսկերն ու ազդեցությունները: Ընդ որում, կլիմայի փոփոխության նկատմամբ դիմացկունությունն ու ջերմոցային

գազերի արտանետումների ցածր մակարդակի ապահովումը պետք է իրականացվի այնպիսի եղանակով, որ չվտանգվի պարենի արտադրությունը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- որպես ազգային մակարդակում սահմանված՝ կլիմայի փոփոխությանը զրոքալ արձագանքման գործողություններ՝ նախաձեռնել եւ գործադրել Համաձայնագրով սահմանված հավակնոտ ջանքերը՝ նպատակ ունենալով իրագործելու Համաձայնագրի 2-րդ հոդվածում սահմանված նպատակը,

- յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ ներկայացնել ազգային մակարդակում սահմանված գործողությունները,

- ըստ ազգային մակարդակում սահմանված ՀՀ գործողությունների՝ մարդածին արտանետումների եւ կլանիչների հաշվառման ժամանակ ապահովել շրջակա միջավայրի ամբողջականությունը, գործողությունների թափանցիկությունը, ճշգրտությունը, ավարտվածությունը, համեմատելիությունն ու հետեւողականությունը եւ կրկնակի հաշվառումից խուսափումը,

- ներկայացնել ջերմոցային գազերի ցածր արտանետումների երկարաժամկետ ռազմավարություն, որը հաշվի է առնում կողմերի ընդհանուր, սակայն տարբերակված պատասխանատվությունը եւ համապատասխան կարողությունները՝ ազգային տարբեր պայմանների լույսի ներքո,

- ըստ անհրաժեշտության՝ միջոցներ ձեռնարկել ջերմոցային գազերի կլանիչներն ու կուտակիչները, ներառյալ՝ անտառները, պահպանելու եւ ընդլայնելու համար,

- համագործակցության եւ օժանդակության սկզբունքների հիման վրա ամրապնդել կլիմայի փոփոխության անբարենպաստ հետեւանքների հետ կապ-

ված կորուստների ու վնասների վերաբերյալ փոխըմբռնումը, գործողություններն ու աջակցությունը,

- հաշվի առնելով տեխնոլոգիաների կարելոթությունը Համաձայնագրի շրջանակում հետեւանքների մեղմացման ու հարմարվողականության գործողությունների իրականացման համար եւ ընդունելով տեխնոլոգիաների ներդրման ու տարածման առկա ջանքերը՝ ամրապնդել տեխնոլոգիաների մշակման եւ փոխանցման շուրջ համագործակցությունը,

- ըստ նպատակահարմարության՝ միջոցներ ձեռնարկել կլիմայի փոփոխության վերաբերյալ կրթությունը, ուսուցումը, հանրությանն իրազեկումը, հանրության մասնակցությունը եւ հանրության համար տեղեկությունների հասանելիությունը բարելավելու նպատակով,

- կանոնավոր կերպով տրամադրել Համաձայնագրի 13-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված տեղեկությունները, ինչպես նաեւ, ըստ անհրաժեշտության, տեղեկություններ տրամադրել նաեւ Համաձայնագրի 7-րդ հոդվածի ներքո կլիմայի փոփոխության ազդեցությունների եւ հարմարվողականության վերաբերյալ:

4. Համաձայնագրի դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին, որոնց համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2015 թվականի դեկտեմբերի 12-ին ստորագրված Փարիզյան համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13 դեկտեմբերի 2016 թվականի
ՍԴՈ-1327